№ 210 Նոյեմբերի 12 Ուրբաթ 1882 Նոյեմբերի 12 Ուրբաթ № 210

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ խմբագրին։ ՆԵՐՔԻՆ լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ — ՅԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Նամակ Վաղարշապատից։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Բագու. 30-ին հոկտեմբերի

«Մշակ» լրագրի 181 №-ի մէջ գրված էր մի լուր Շամախուց, որ վերաբերում է այդ քաղաքի հայ-աւետարանականներին։ Մենք այս նամակի մէջ կաշխատենք ցոյց տալ, թէ որքան ուղիղ են պ. լրատուի արտասանած հետևեալ չորս նախադասութիւնները։ 1) Հայ-աւետ. հին սերունդը սաստիկ անընթերցասէր է, 2) չէ հետաքրքրվում աշխարհային երևոյթներով, 3) պախարակում է նրանց, որոնք կամ ծխում են, կամ զինի են գործածում, 4) նոր սերունդը ունի աւելի լուսաւոր գաղափարներ։

1) Հին սերունդը սաստիկ անընթերցասէր է։ Սրա մասին մենք միայն այս կասենք, որ հին սերունդի գրեթէ կէսը միշտ կարդում է «Մշակ» լրագիրը, կարդում է «Բաֆֆի» գրուածքները։ Սրանք ճանաչում են Վարդանին, տանուտէր Խաչօին, սիրում են Դաւիթ-բէկին և ատում են Մելիք-Դաւիթին իր ընկերոջ հետ։ Այս դասին պատկանողները կարդում են նոյնպէս ուրիշ աշխարհային գրեանք։ Միւս կէս մասից չէ կարելի պահանջել, որ ընթերցասէր լինեն, որովհետև նրանք չատ դժուարութեամբ են հասկանում իրանց կարդացածը։ Բայց եթէ սրանք աւետարանը կարդում են և փոքր ի չատէ հասկանում են, պատճառն այն է, որ նրա միջի խօսքերը հարիւր անգամ կարդացել են և հազար անգամ լսել։

Մենք չենք ուրանում, որ կան այնպիսիները, որոնք, եթէ մի աչխ. գիրք են նկատում, ուղիղ կէս ժամ գլուխները թափահարում են, բայց այսպիսիների թիւը աննչան է։ Կարելի՞ է արդեօ՞ք ի նկատի ունենալով մի աննչան մասի տգիտութիւնը, մեղադրել ամբողջ հին սերունդը։

2) Հին սերունդը չէ հետաքրքրվում աշխ. հարցերով։ Այս լսելով մենք սկսում ենք կարծել, որ աղնիւ լրատուն չէ հասկանում «աշխ. երևոյթներ» խօսքը։ Մենք հիացած ենք մնացել, տեսնելով այս ամառը, թէ ինչպիսի հետաքրքրութեամբ կարդում էր հին սերունդը եգիպտական հարցերին վերաբերեալ ամեն մի յօդուած, ամեն մի լուր, ամեն մի հեռագիր։ Իսկ դրանից առաջ էլ միշտ կիրակի երեկոները ժողովվում էին ժողովրանում, մէկին բարձր ձայնով կարդացնել էին տալիս հեռագիրները և քաղաքական յօդուածները և իրանք սիրով ականջ էին դնում։ Հետաքրքրվել այն փոփոխութիւններով որ կատարվում են աշխարհի երեսին, այն նոր կարգադրութիւններով, որ լինում են տէրութիւնների մէջ, միթէ չէ նշանակում հետաքրքրվել աշխարհային երևոյթներով։ Այստեղ դարձեալ չեմ ուրանում, որ կան մի քանիներ, որոնք ասում են, թէ այսպիսի բաներով գլուխները կը խառնվի և Քրիստոսից կը հեռանանք, բայց սրանք բացառութիւն են կազմում։

3) Պախարակում են նրանց, որոնք ծխում են կամ զինի են գործածում։ Առաջին խօսքը, թէ ծխողներին պախարակում են բոլորովին դարձեալ խօսք է. վերցնենք երկրորդ խօսքը։ Մի հինգ տարի սրանից առաջ այսպէս էր, որովհետև գինի գործածողների թիւը սակաւ էր, բայց այժմ սակաւ է չը գործածողների թիւը։ Հին սերունդը, տեսնելով, որ էլ կամաց կամաց բոլորն էլ սկըսում են գործ ածել, դադարեց վերջիններին պախարակելուց։ Բայց մեր հայրերը այժմ նեղանում են նրանցից, որոնք իրանց հարբելովը ամբողջ համայնքի ծաղրածութեան պատճառն են դառնում։

4) Նոր սերունդը ունի աւելի լուսաւոր գաղափարներ։ Ի՞նչ ծիծաղելի նախադասութիւն։ Նոր սերունդը, մեր կարծիքով, բաղկանում է մօտ հարիւր երիտասարդներից, որոնցից չատերը ցրուած են օտարութեան մէջ։ Այս հարիւրից դուցէ 10 հոգի փոքր ի չատէ լուսաւոր գաղափարների տէր են։ Մնացեալներից չատերը «գլուխները քաշ» իրանց գործին են, չը գիտեն, թէ ինչ է կատարվում գոնեա իրանց չուրջը,—կայ արդեօք մամուլ ասած բանը աշխարհի երեսին, թէ ոչ։ Եթէ հարցնես թէ ինչ բան է «կազէթ» (լրագիր) չեն հասկանայ, կը պատասխանեն. «կազէթը» այն թուղթն է, որի մէջ առևտրականները բան են փաթաթում։ Սրանք հին գաղափարների մէջ մնացած սեղական դատողութիւնից զուրկ էակներ են։ Ինչքան էլ գլուխ ենք կոտրում, էլի չենք կարողանում հասկանալ, թէ նոր սերունդի որ լուսաւոր գաղափարների մասին է խօսում պ. լրատուն։ Գիտենալ, թէ զինի գործածելը մեղք չէ, դեռ չէ նշանակում աւելի «լուսաւոր գաղափարների տէր» լինել։

Այս բոլորը գրելուց յետ, մենք այնու ամենայնիւ խոստովանում ենք, որ մեր մէջ լուսաւորութիւնը անչարժ է մնում. նոր սերունդը մեծացել է ազէտ, ու ամենանորն էլ մեծանում է դարձեալ ազէտ։ Բայց սրա պատճառը, ոչ թէ այն է որ մեր հայրերը չեն հասկանում աշխարհային ուսման օգուտը և կամենում են միայն երկնքի վրա մտածել, սրանք ընդհակառակը ափսոսում են որ իրանց ժամանակին ուսումը սովորուած չէ եղել, որ իրանք էլ սովորէին, այլ այս անչարժութիւնը ունի իր առանձին պատճառները, որոնց մասին կը խօսենք, երբ հարկաւորութիւն կը լինի։

Ս. Թառայեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻԵՐ

—

Կիրակի առաւօտեան, նոյեմբերի 14-ին, լինելու է Արծրունու թատրոնում քաղաքային երկրորդ կարգի ընտրողների ժողովը առաջիկայ 1883—1886 քառամեակի համար դումայի ձայնաւորներ ընտրելու համար։

—

Նոյեմբերի 10-ին, չորեքշաբթի օր, պ. Ղամբարեան կարդաց Թիֆլիսի Գիւղատնտեսական ընկերութեան դահլիճում իր առաջին դասախօսութիւնը ռուսերէն լեզուով քաղաքական տնտեսութեան մասին։ Լսողներ մօտ 50 հոգի էին, թէ տղամարդիկ և թէ կանայք։ Դասախօսը ցոյց տուեց հմտութիւնների մեծ պաչար, միայն մեղ թվում է որ այս կամ այն հարցի մանրամասներ բացատրելու ժամանակ պարոնը չեղվելով իր գլխաւոր պրօգրամայից, նրա ընդհանուր միտքը այդ տեսակ դիպուածներում անհասկանալի էր դառնում լսողներից անփորձներին, որոնք սովոր չեն լսել դասախօսութիւններ համալսարանական լսարաններում։ Բայց այնու ամենայնիւ, թէև պարոնը ճարտարախօս չէ, բայց իմանում է իր առարկան գրաւիչ դարձնել լսողների համար։

յուլիսի 10-ին մարմնի բոլոր ձախ մասերի կաթուած (параличъ) էին պատճառել։ Այդ միջոցին ես Ալէքսանդրօպոլ էի գտնվում և վեհափառի պահանջմամբ հասայ Բիւրական յուլիսի 18-ին երեկոյեան։ Մօտ 12 օր վեհափառը մնացել էր առանց բժշկի և չը նայելով իր այս ցաւալի դրութեան, բաց ի բաց մերժել էր Երևանի կամ Էջմիածնի բժշկներին հրաւիրելու։

Յուլիսի 19-ն ես կարողացայ գործ դնել այն բժշկական միջոցները, որոնք հաճելի եղան Նորին Վեհափառութեան։

Մինչև օգոստոսի 15-ը Վեհափառի դրութիւնը բաւականի բարւոքվեցաւ, ախորժակը լաւ էր, միայն չուտ չուտ էր ենթարկվում փորկապութեան, իսկ գրեխիկի գործածութիւնը 5—6 մինչև անգամ 7 օրն միանգամ էր ընդունում, այն էլ դժվարութեամբ։ Վեհափառը կարողանում էր քայլել երկու չաթիների չատ թոյլ օգնութեամբ և մինչև անգամ երբեմն մի չաթի օգնութեամբ ևս։ Ձախ ոտի կաթուածը համարեա բոլորովին անցաւ, իսկ ձախ ձեռքի գործածութիւնը դեռ ևս մնացել էր փոքր ինչ սահմանափակ։ Կաթուածքի լաւանալուն, ոյժերի վերականգնմանը և ընդհանրապէս բժշկական միջոցների գործածութեանը արգելք էին լինում խրօնիկական տկարութեան արկածները և այդ միջոցին Վեհափառ Հայրապետը դիտմամբ կերակուր քիչ էր ընդունում, և գործ էր դնում անձամբ փորձած միջոցներ և զգուշութիւններ։

Զը նայելով թուլութեանը՝ Վեհափառի դրութիւնը այնքան բարւոքվել էր, որ Վեհափառ Հայրապետը աչքի էր անցնում սինոդից ներկայացրած օրագիրները և երբեմն 20—25 հատ նոցանից ստորագրում էր։

Սեպտեմբերի առաջի օրից սկսած, ըստ ցանկութեան Վեհափառի պատրաստութիւններ տեսնվեցան ամենայն յարմարութեամբ Բիւրականից Էջմիածին վերադառնալու համար։ Սեպտեմբերի 13-ին առաւօտեան ժամը 10-ին Վեհափառ Հայրապետը դուրս եկաւ իր ոտքով երկու չաթիների օգնութեամբ ամարային վեհարանից մինչև սանդուղքները, որտեղից բազկաթոռով չաթիները իջեցրին ցած և Վեհափառը կրկին երկու չաթիների օգնութեամբ, կարմիր մահուդով փռված երկար տախտակի վրայով հասաւ մինչև կառքի դուռը և համաձայն իմ կարգադրութեան չաթիները տեղաւորեցին Վեհափառին կառքի մէջ։ Այս ամենը կատարվեցաւ Բիւրականի բնակիչների շատերի և կառավարութիւնից նշանակված պահպանողական ձիաւորների ներկայութեամբ։ Այնուհետև կառքը ծանրաչարժ ուղեորվեցաւ դէպի Էջմիածին։ Բիւրականից դեռ երկու վերստ չը հեռացած Վեհափառի խրօնիկական տկարութիւնը շարժեց, որին գլխաւորապէս նպաստեց մօտ ինը օրվայ փորկապութիւնը և չը նայելով բոլոր շրջապատողների առաջարկութեանը և խնդիրներին, Վեհափառը չը կամեցաւ գրեխիկ ընդունել։

Երեկոյեան ժամը 7-ին Վեհափառը հասաւ Էջմիածին, կառքը կանգնեց վեհարանի մեծ դրան մօտ, միաբանութիւնը և ժողովուրդը շրջափակեցին կառքը, Վեհափառին ընդունելու համար, այդ միջոցին սաստիկ քամի էր փչում դէպի կառքի աջակողմեան դուռը և երբ կառքի դուռը բացարին, Վեհափառը բարձր ձայնով հրամայեց փակել դուռը, մին որ խրօնիկական տկարութեան արկածները այդ րոպէին սաստիկ չարժեցան և երկրորդ Վեհափառը քրտնած լինելով մրսողութիւն զգաց, երկու կամ երեք բոպէից յետոյ Վեհափառին չաթիները դուրս հանեցին կառքից մուշտակը գցելով, բազկաթոռով տարան վեհարանի մեծ դահլիճը։ 25 վերստ 9 ժամվայ ճանապարհորդութիւնը Վեհափառին յոգնեցրեց, բայց և այնպէս կարողացաւ Վեհափառը մօտ ժամուկէս դահլիճի մէջ բազկաթոռի վրա նստած մնալ։

Խրօնիկական տկարութեան արկածները այս անգամին չարունակվեցան մինչև սեպտեմբերի 22, անտիմն տարածված լուրերը Վեհափառի հիւանդութեան վերաբերմամբ աւելի սաստկացան։ Սեպտեմբերի 22-ից մինչև 25 (Վեհափառի անուանակոչութեան օրը) Նորին Վեհափառութեան ոյժերը այնքան վերականգնեցան, որ այդ օրը Վեհափառ Հայրապետը բարեհաճեցաւ ընդունել դերապատիւ Մկրտիչ արքեպիսկոպոսին և դերապատիւ Սերովբէ և Մեսրովբ եպիսկոպոսներին, նոյն օրը ներկայացաւ և Երևանի թեմական առաջնորդ դերապատիւ Գէորգ եպիսկոպոսը, որին Նորին Վեհափառութիւնը բարեհաճեցաւ բանակի շնորհել։ Այս ընդունելութիւնը այնքան տարածվող լուրերին մասամբ հանդստացրեց։

Զանցաւ մի չաբաթ, Վեհափառի հին տկարութեան նշանները սկսվեցան նորից կրկնվել և սաստկանալ։ Այս մոլեգին ցաւը 10—15 րոպէն անգամ այնքան սաստիկ ցաւով էր կրկնում, որ Վեհափառի մկանունքները կծկվում էին կարծես թէ քարանում էին։ Վեհափառի ոյժերը թուլանում էին, ձախ ձեռքի շարժողութիւնը աւելի սահմանափակվում էր և ընդհանրապէս Վեհափառի դրութիւնը վատանում էր։ Վեհափառի այս դրութեան վրա ցաւակցողները փորձեցին համոզել Վեհափառին ընդունել մի գերմանացի երեելի վիրաբուժին, որ իբրև ճանապարհորդ գտնվում էր Երևանում, և որը աւելի թեթև միջոցներով բժշկում է փամփշտակային տկարութիւնները։ Վեհափառ Հայրապետը համոզվեցաւ այդ իբր ճանապարհորդ բժշկին։ Վահրամ եպիսկոպոսի առաջարկութեամբ հոկտեմբերի 10-ին ես հեռագրեցի «Արձագանքի» խմբագիր Աբգար Յովհաննիսեանին խնդրելով հրաւիրել բժշկապետ Գօլբեկին Էջմիածին մի չաբաթ միջոցաւ։

Բժշկապետ Գօլբեկը հասաւ Էջմիածին հոկտեմբերի 17-ին առաւօտեան։ Ճաշից յետոյ երկուսս միասին ներկայացանք Վեհափառին. մօտ ինն օր էր, քանի որ ես տեսած չէի Վեհափառին և մեծ փոփոխութիւն նկատեցի Վեհափառի դրութեան մէջ. ոյժերը թուլացել էին, ձախ ձեռքի մկանունքները ենթարկվել էին կոնտրակտուրայի, և ընդհանրապէս Վեհափառի դրութիւնը վատացել էր։

Երկրորդ և երրորդ անգամին, Երևանի քաղաքային բժիշկ Լեոն Տիգրանեանը ևս ներկայացաւ իբրև թարգման (այսպէս էինք հասկացրել Վե-

գուցէ անփորձ լսողի համար չատ բան անհասկանալի կը մնայ պ. Ղամբարեանի դասախօսութիւններից, բայց նա, որ ծանօթ է քաղաքական ինտեսութեան հետ և գիտէ լսել, սովոր է հետևել պրոֆէսօրների դասերին, չատ բան կարող է սովորել պ. Ղամբարեանի դասերից: Այդ դասերի շարունակութիւնը խոստանում է հետաքրքիր լինել: Հետևեալ դասախօսութիւնը լինելու է չաբաթ օր, նոյեմբերի 13-ին:

—

Հայոց Բարեգործական ընկերութեան խորհուրդը խնդրում է մեզ տպել հետևեալը: «Քարվանսարա գիւղում, անցեալ հոկտեմբերի 17-ին կազմվել է հայոց Բարեգործակ. ընկերութեան տեղական վարչութիւնը արժանապատիւ Ղուկաս քահանայ Սիմէօնեանցի նախագահութեան տակ: Տեղի գործադիր անդամների թիւը առ այժմ 15 է:»

—

ԲԱԳՈՒԻՑ հաղորդում են մեզ որ Սաֆրազեանի առաջին ներկայացումն այդ քաղաքում չատ սառն անցաւ:

—

Նոյն տեղից մեզ գրում են: «Շուտով բացվելու է Բազուի մէջ գործակատարների կըլուբ:»

—

Կիրակի, նոյեմբերի 14-ին, երեկոյեան, Արծրունու թատրոնում, հայ դերասանական խումբը կը ներկայացնէ էժանացրած գներով առաջին անգամ «Աղքատութիւնը արատ չէ» կոմեդիա 3 արարուածով, հեղինակութիւն Օսարովսկու և «Երեք ապտակ» վոդեվիլ մի արարուածով: Մեր կարծիքով միայն այդ ճանապարհով, այն է հասկանալի ըէպերտուար ընտրելով և թատրոնի գները էժանացնելով և թատրոնը այդպիսով մեծամասնութեանը մատչելի դարձնելով, մեր դերասանական խումբը կը հասնի իր նպատակին,— թատրոնի գործը ժողովրդական դարձնել:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, 28 հոկտեմբերի

Ամեն խօսակցութեան նիւթ Քեռթիպեանի մահն է: Մարմինը դրուած է Բերա մեր եկեղեցին. հազարաւոր անձինք, մասնաւորապէս կանայք, կը շարունակեն երթալ տեսնել: Խեղճ տեսարան մը կընծայէ: Ո՛չ կրօնից, ո՛չ ազգութեան տարբերութիւն կայ: Սակայն ինչ որ իր գագաթնակէտը հասուցեր էր քրիստոնէից, մանաւանդ հայոց զայրոյթը, այդ կառավարութեան ընթացքն էր: Ահա չաբաթ մ'է այսօր որ այդ ոճիրն գործադրուեցաւ, ինչ պէտք էր ըներ կառավարութիւնը: Ո՛չ մի ձերբակալութիւն, ո՛չ մի խուզարկութիւն: Ոստիկանութիւնը ամեն ջանք կընէ որ ցոյց տայ թէ Քեռթիպեան անձնասպան է: Պաշտօնական յայտարարութիւն մը ըրին, սակայն դա բաւական չեղաւ: Որպէս զի անձնասպանութիւնը հաւանական ընեն, սկսան դիմել ամեն տեսակ ճարտար բայց անպատկառ միջոցներու: Զենք գիտեր որո՞ւ միջոցաւ, բայց հաւանօրէն Քեռթիպեանի մի հայ ծառան ըլլալու է, ատոր ձեռքով սկսան տեղեկանալ Քեռթիպեանի ներքին կենաց, բարեկամացով ալ ըլլալուն, ինչպէս ժամանակ անցնելուն: Ասոնք գիտնալով սկսան կանչել այդ բարեկամները և անոնց հարցնել թէ՝ վերջին ատեններս տխուր էր Քեռթիպեան, այնպէս չէ՞. խելքին եկած ըլլալու նշաններ ցոյց կուտար այնպէս չէ՞. խաղամոլ էր, այնպէս չէ՞: Այլ չեմ գիտեր դեռ ինչ արտառոց հարցումներ: Անոնք ալ ժխտական պատասխան տուին:—Լրագիրներու մէջ սկսան հրատարակել զանազան անձանց վկայութիւնները՝ իբր թէ նոյն օրը Քեռթիպեանը տեսած ըլլան որ կերթար դէպի ծովը: Այս վկայներուն մէջ մի աւստրիացի ալ կար որ կարևորութիւն ունեցող անձ է, և ահա նա ալ կերթայ բողոքել արտաքին գործոց նախարարութեան թէ՝ հրատարակած են իր վկայութիւնները բոլորովին խեղաթիւրած: Դեռ որ մէկը պատմենք:—Բժիշկները իրենց տեղեկագիրն չեն տուած, սպասելով որ կառավարութիւնը տայ իր վերջնական վճիռը: Ասոնք կերկնչէին թէ՝ իրենց տեղեկագիրը կառավարութիւնը կը խծբծէ, ուստի սպասելն լաւ համարած են:—Ցանձնախումբ մը կը կազմուի, որոյ նախագահ է արդարութեան գործոց նախարարը, բայց ոչ մի հայ անդամ է:—Երեքշաբթի երեկոյ լուր կը տարածուի թէ՝ բժիշկներէն մի մաս դարձած են կառավարութեան կողմ: Բայց մեզ անհնարին էր հաւատալ թէ՝ հայ բժիշկներն ալ այնքան անազնիւ ըլլան. և հայ բժիշկները կը կազմեն Պոլսոյ բժշկաց մեծամասնութիւնը: Այս խառնաշփոթութեանց, այս տպաւորութեանց ներքև էինք, և ահա երէկ երեկոյ ուշ ատեն յայտարարութիւն մը կը հրատարակուի թէ՝ վաւերական ապացոյցներ կան Քեռթիպեանի անձնասպանութեան:— Իր գրպանին մէջէն չորս նամակներ գտնուած են, զանազան անձանց հասցէին, յորոց կը տեսնուի թէ՝ խեղճ բժիշկը անձնասպանութեան խորհուրդներ ունի: Այս լուրը հաւատալի ըլլալու համար հարկ է որ նամակները տեսնուին: Շատ կարելի է որ այս գործին մէջ ալ դարձուածք մը ըլլայ: Կը լսենք թէ կառավարութիւնը պատրիարքարան լուր խրկած ըլլայ, որ Քեռթիպեանի մարմինը գիշերանց վերցնեն իբր անձնասպան: Պատրիարքարանը մերժած է այս առաջարկը: Եթէ այս լուրը ստոյգ ըլլայ կարևորութիւն կունենայ: Նախ՝ կառավարութիւնը ինչ կը խառնուի մեր գործոց: Անձնասպան մը հանդիսաւոր կերպով կը վերցնենք, կամ ոչ, այդ մեր գիտնալու գործն է: Սակայն այս լուրէն ենթադրութիւն կը հանենք թէ կառավարութիւնը ուզենայ անդամ մը ննջեցեալը թաղել տայ որպէս զի վերջը ուզածը ընէ: Զէ՞ կրնար երեկայել թէ ինչ բազմութիւն պիտի ըլլայ: Կը կարծուի թէ Բերա, Ղալաթիա պիտի լեցուին: Ներսէս սրբազան խմաց տուեր է պատրիարքարան թէ ինքն պիտի խօսի դամբանականը: Պոլսոյ բոլոր հայ եկեղեցականները ներկայ պիտի գտնուին: Հաւանօրէն խորէն սրբազանն ալ դամբանական մը կը խօսի:—Սակայն անձնասպանութեան խնդիր հանելով, այս ամենը մէկ կողմ կը մնայ, գործը ուրիշ կերպ կըլլայ:—Այդ մարմինը թաղուելէն վերջ, եթէ այդ նամակները չենթադրուելէն ինչ բան ալ խնդիրը կորսնցուցած կըլլայ իր կարևորութիւնը: Տակաւին այս առաւօտ ոչինչ ստոյգ գիտենք թէ՝ այդ նամակները, որոց վրայ կը խօսուի, իրաւ հանդուցեալին գիրն է: Հաղիւ կրնայ դա ստուգուիլ այսօր վաղը: Սակայն եթէ խեղճ Քեռթիպեանը անձնասպան է, ինչով ինքզինք սպաննած է: Ոչ զանակի նշան, ոչ ռեվոլվերի, ոչ թոյնի, ոչ ծովու, ոչինչ նշան: Օրինական բժշկութիւնը կը հաստատէ թէ նա սպաննուած ըլլալու է մի քանի անձանց ձեռօք: Տեսնենք:—Շատերը կը փափագին որ անձնասպան եղած ըլլայ, զէթ թիւրքերու ձեռքէ մեռած չըլլայ: Գաղտնիքը երևան կելլէ:

Այս պահուս որ կը գրեմ, Ազգ. ժողովն ալ գումարուած է և պիտի ընտրէ կրօնական ժողովը: Կրօնական և քաղաքական ժողովներն ընտրուած ըլլալով, տեղապահի ընտրութիւնը կը կատարուի մօտ ատենէ: Այդ ընտրութեան վրայ միշտ զանազան կարծիքներ կան:—Վերջապէս Բարթողիմէոս եպիսկոպոսին անունը հրապարակելու: Ինչ որ երկար ատեն ձեզ գրեցինք, այսօր մեր հրապարակին վրայ կը խօսուի: «Փունջ»-ի երէկ երեկոյի մի քանի տողերն շատ ուշադրութիւն գրաւեցին: Ահա «Փունջ»-ի գրածը:—«Կը լսեմք, որ դատական գործոց Նախարար վսեմ. Ճէվդէթ փաշա իմացած ըլլալով, թէ Ազգին մէջ կան խօսակցութիւններ որ գեր. Նար-Պէյեան, կամ գեր. Յ. Վեհապետեան և կամ գեր. տ. Մելքիսեդեկ սրբազաններն յաթոռ տեղապահութեան կամ պատրիարքութեան բարձրացունել կուզեն, դիտողութիւն ըրեր է յիշեալ սրբազաններուն դէմ, և կարծիք յայտներ է, թէ Բ. Դուռն կը հաւանի՝ եթէ Պրուսայի առաջնորդ գեր. Տ. Բարթուղիմէոս սրբազանն ըլլայ, որոյ համար ալ կուսակցութիւն մը կերևի, ոչ այնչափ յայտնապէս:» —Այս խօսքերէն ակներև կը տեսնուի թէ կառավարութիւնը կուզէ ուղղակի միջամտել մեր ամեն գործոց մէջ: «Փունջ»-ի հրատարակութիւնը մի հարուած կըլլայ Բարթուղիմէոսի ընտրութեան: Սակայն ճիշդը ըսելով մենք չատ արդար կը գտնենք ճէվդէթ բաշան:—Ներսէս սրբազանի հրաժարական ընդունողք սա համոզումն ունէին թէ հարկ է լաւացնել ազգին և Դրան յարաբերութիւններն: Արդ երբ կը գրուի մի այնպիսի պատրիարք կամ տեղապահ, որ զարձեալ անհաճոյ է Դրան, այն ատեն ինչ հարկ կար Ներսէս սրբազանի հրաժարմանը: Ուստի բնական է որ Դրան խիստ հաճոյ անձ մը մեզ գլուխ ունենանք, բայց Դրան հաճելի անձն ալ ազգին հաճելի է:—Ուրեմն խնդիրն հոս է, պիտի գտնենք միջոց մը որ հայոց և թրքաց շահերն իրարու հաշտ ըլլան:— Շատ խառնաշփոթ կացութեան մը մէջ ենք, տեսնենք ինչպէս մէջէն պիտի ելլենք:

—

Կ. Պոլիս, 1 նոյեմբերի

Սպանեալ թէ անձնասպան: Տակաւին ոչինչ ստոյգ Քեռթիպեանի մահուան վրայ: Չորս նամակներն, զոր կըսեն թէ գտան իր գրպանի մէջ, ենթադրել կուտան թէ Քեռթիպեան ունեցած ըլլայ անձնասպանութեան խորհուրդներ:—Սակայն ստոյգ այդ նամակներն հանդուցեալին ձեռագիրն է: Եղբայրներն ու բժիշկներն հաստատական պատասխան կուտան: Բայց ժողովուրդի անհուն մեծ հավատն բացատրելով թէ գերմանացի բժշկապետը թոյլ է ռուսերէն լեզուի մէջ և ստիպվեցանք բժիշկ Տիգրանեանցին իբրև թարգման հրավիրել). թէ ինչ դժուարութեամբ և ինչ միջոցներով կարողացանք Վեհափառի խրօնիկական տրկարութիւնը քննել, այստեղ աւելորդ եմ համարում յիշել, բժիշկ Տիգրանեանը ներկայ էր, թողնում եմ նորան այդ բանը նկարագրել եթէ հանդամանքները կը պահանջեն: Այստեղ միայն առաջ կը բերեմ մի քանի տող, այն արձանագրութիւնից, որ իմ առաջարկութեամբ կազմվեցաւ երեք բժիշկներիս ստորագրութեամբ:

Вслѣдствіе атероматознаго процесса въ артеріяльныхъ сосудахъ у Его Святѣйшества Католикоса всѣхъ армянъ Георга IV. около 10-го іюля сего года, во время лихорадочнаго состоянія, упорного запора, и судорожнаго мочеиспусканія послѣдовала апоплексія (кровоизліяніе) мозга, имѣвшая послѣдствіемъ параличъ лѣвой половины лица, зѣва языка, лѣвой руки и ноги. Явленія эти въ продолженіи первыхъ двухъ мѣсяцевъ по разсказамъ всѣхъ видѣвшихъ больного улучшились на столько, что глотаніе, функція языка и ноги приблизились къ нормѣ; и движеніе лѣвой руки остались нѣсколько ограниченными. При часто возвращающихся припадкахъ со стороны пузыря и кишекъ, паралитическое состояніе снова ухудшилось...

Больной вообще относиться съ пренебреженіемъ ко всѣмъ медицинскимъ пособіямъ и отказывается отъ правильной медицинской помощи. Выдающихся отклоненіи въ душевной сферѣ не замѣчены.

Այժմ ընթերցողին եմ յանձնում պ. Բէզնազարեանցի նամակի բովանդակութեան ա. ու բ. կէտերի անտեղիութիւնը:

Վերն յիշեցի Վեհափառի հիւանդութեան դրութիւնը օգոստոսի վերջերին, հէնց այդ միջոցին (կարծեմ օգոստոսի 19-ին) Վահրամ եպիսկոպոսի խնդրանօք մի մասնաւոր նամակ ուղարկեցի իմ ծանօթ Երևանի դաւառական դանձապահ պ. Վարշամեանին, տեղեկութիւն խնդրելով մի բանի համար: Նամակի վերջում իմ կողմից նկարագրեցի, որքան կարելի էր հանգամանօրէն Վեհափառ Հայրապետի այն ժամանակվայ դրութիւնը *) և խնդրեցի հանգստացնել իր ծանօթներին և հաւատ չընծայել անհիմն տարածված լուրերին Վեհափառի հիւանդութեան վերաբերմամբ: Նամակիս մէջ պ. Վարշամեանին խնդրեցի յայտնել պ. Բէզնազարեանին, որ իմ անձնականութիւնը հանգիստ պահէ, որով պարոնը երկու տարու չափ է, չատ է սիրում պարապել: Ճշմարիտ է մասնաւոր նամակիս մէջ պ. Բէզնազարեանին Նորայր ես անուանեցի և յիշեցի «Մշակի» մէջ հաղորդած լուրը, ընդունելով իբրև մի ակնարկութիւն անձիս վերաբերեալ: Ես այս բոլորը գրել եմ մասնաւոր նամակաւ ոչ թէ պաշտօնական անձի, այլ մօտիկ ծանօթի և պ. Բէզնազարեանին էլ մօտիկ ազգականի (քենակալ): Եթէ պ. Բէզնազարեանը նամակիս դէպի իրան վերաբերեալ բովանդակութիւնը անպատուութիւն համարեց, կարող էր ուղղակի, կամ նոյն իսկ պ. Վարշամեանի ձեռօք մասնաւոր նամակաւ պատասխանել: Իսկ այդ նամակը դուրս հանել հրապարակ և «գրականական անքաղաքավարութիւն» համարել, պ. Բէզնազարեանցը, իմ կարծիքով, իրաւունք չունէր: Կրկնում եմ, ես գրել եմ մի մասնաւոր նամակ մօտիկ ծանօթ պ. Վարշամեանին, որն ազգական է և աւելի մօտիկ ծանօթ է պ. Բէզնազարեանին: Նամակիս մէջ կարող էի պ. Բէզնազարեանին և «Հին բարեկամ» անուանել, կարծում եմ պ. Բէզնազարեանը պիտի չը նեղանար, քանի որ մենք միմեանց հասկանում ենք և ճանաչում ենք:

Թող ընթերցողը դատէ, ո՞վ է մեզանից մոռացել գրականական քաղաքավարութիւնը:

*) Նամակիս մէջ որքան իմ միտքս է ես գրած չունեմ բոլորովին առողջ բառը, ուրեմն իմ ներկայութիւնը Բիւրականում աւելորդ էր, ես հեռագրեցի պ. Բէզնազարեանին և պ. Վարշամեանին նամակիս պատճէնը ուղարկելու: Գ. Տ. Գ.

«Մշակի» մէջ տպված Նորայրի լուրից դեռ առաջ, քանի մի անդամ ես անհրաժեշտ համարեցի, ժողովրդեան մէջ անհիմն լուրերի տարածման առաջն առնելու համար Վեհափառի վերաբերմամբ, պարբերաբար, երբ հարկը ստիպէ բիւլէտէն հրատարակել լրագրների միջոցաւ, բայց ինչ, ինչ արգելքների հանդիպեցի: Օգոստոսի կարծեմ 24, գալով Էջմիածին հիւանդ աշակերտներին այցելելու, պ. Նահապետեանը պատմեց ինձ Թիֆլիսի հասարակութեան մէջ տիրապետված յուզմունքը Վեհափառի տկարութեան մասին, հեռագիր պատրաստեցի «Մեղուին» ուղարկելու, այդ ես չը յաջողվեցաւ:

Պ. Բէզնազարեանը բարեհաճում է ինձ տարեկան 4,000 բուբլի ռոճիկ նշանակել, այդ մասին կարող եմ պատասխանել ռուսաց մի առածով «ձեր բերանով մեղր ուտել»: Այսօր նոյեմբերի 4-ն է, դեռ ինձ յայտնի չէ իմ տարեկան ռոճիկը, միայն պ. Բէզնազարեանի գրութիւնից իմացայ ռոճկիս քանակութիւնը, որովհետև մինչև այժմ սեպտեմբերի ռոճիկն անդամ ստացած չեմ, բացի ճեմարանական ռոճիկը 166 բուբլի $66^1/_3$ կոպ.: Անցեալ ուսումնական տարով վերջանում էր իմ պայմանների ժամանակը, և երբ Էջմիածնի կողմից առաջարկվեցաւ պայմաններս վերանորոգելու, ես այլ կերպ վարվեցի, ոչ նման առաջի անդամ պայման առաջարկելու միջոցին, թէպէտ կը գտնվեն մարդիկ, որոնք ինձ կը դատապարտեն, բայց հանգամանքները ինձ կը պաշտպանեն: Ես իմ աշխատանքները թէ ճեմարանի և թէ վանքի մէջ, ոչ պակաս համարելով միւսներին հա մեմատ, առաջարկեցի այլ պայմաններ, և ոչ թէ 4,000 բուբլի, ինչպէս պ. Բէզնազարեանը ասում է, այլ դասերի թիւին համեմատ մօտ 5,000 բուբլի: Մինչև յուլիսի 15-ը պիտի վճռվէր պայմանների հարցը, այնուհետև կամ պիտի մնայի և կամ հեռանայի Էջմիածնից, բայց դէպքերը այլ տեսակ կատարվեցան և յուլիսի 15-ին պայմանների մասին պատասխան ստանալու փոխանակ, այդ օրը հեռագրով Վեհափառ Հայրապետի հրամանաւ շուտափոյթ պահանջվեցայ Բիւրական, և մինչև այսօր անխոհեմութիւն համարեցի պայմաններիս մասին բառ անդամ արտասանել:

Վեհափառը իր անուանակոչութեան օրը բարեհաճեցաւ պարգևել ինձ 500 բուբլի, պ. Բէզնազարեանը այդ մասին չեշտում է և տողերի մէջ ճշմարիտն ասած քաղաքավարի ճարպիկութեամբ հասկացնում է ընթերցողին, Վեհափառի տկարութեան մասին իբր անճիշդ տեղեկութիւններ տարածելու պատճառը: Ծանօթներից չատերը այդ միտքն ինձ յայտնեցին: Ի՞նչ անուանել պ. Բէզնազարեանի այդ քաղաքավարի դրականական քաղաքավարութեան. եթէ մի օտար անծանօթ մարդ յայտներ այդպիսի մի մեղք դուցէ ներելի կը լիներ, բայց պ. Բէզնազարեանը ինձ լաւ է ճանաչում, ճանաչում է ինձ նմանապէս և բոլոր Երևանը, ուր համարեա հինգ տարի գործել եմ, որքան կարողացել եմ: Մթթէ մի մարդ, համարեա չորս տարի, ամբողջ ժամերը զոհելով ճեմարանին և վանքին (որ ոչ թէ միայն աշակերտներս և միաբանութիւնը, այլ և անդամ Էջմիածնի անխօս պատերը կը վկայեն), չաբաթական պայմանին համաձայն 16 դասի տեղ, տուել է միշտ 22—26 դաս, այն էլ համեմատաբար ամենաչնչին ռոճկով, արժանի չէր Վեհափառութեան պարգևին, 500 բուբլի քանակութեամբ: Պ. Բէզնազարեանից այդպիսի մի ակնարկութիւն անսպասելի էր, կարծում եմ միայն անտակտութիւնը ստիպել է նրան, այդպիսի մի ուղղութիւն տալ նամակին:

Իսկ ինչ որ կը վերաբերի պրոֆէսորութեանս իբրև կատակական կոմպլիմէնտի, շնորհակալութիւն եմ յայտնում պ. Բէզնազարեանցին, հրավիրելով նրան դասախօսութիւններս լսելու. յուսով եմ որ ճեմարանի պ. տեսուչն էլ արգելք չի լինի:

Բժիշկ Գրիգոր Տէր-Գրիգորեանց

ծամանութիւնը դժուար կը հաւատայ Քեաթիպեանի անձնասպանութեանը: Տակաւին բժշկներու տեղեկագիր մը չը հրատարակուեցաւ, որպէս զի փարատէր ամեն տարակոյս: Մեր թերթերը մի քիչ տարակոյս յայտնելէ վերջ ընդունեցին անձնասպանութիւնը: «Խթեան Էքսպրէս» (հին Լէվընդ Հէրալդ) անգլիական թերթը լռութիւն կը պահէ: Մեր «Մէճմուայի Հավատիսը» ջանաց ցոյց տալ և հաստատել թէ Քեաթիպեան պարզապէս սպանուած է: Մէճմուայի այդ թիւերը ձեռքէ ձեռք կը խլէին իւրաքանչիւրին քը-սանապատիկ գինը վճարելով:

Քանի որ պաշտօնապէս Քեաթիպեան անձնասպան հրատարակուեցաւ, մեր պատրիարքարանն ալ խզմինքը վճռաջինջ ատեան մը չը նկատեր և մեր կղերը կարձկէ իր անաթէման: Հինգշաբթի առաւօտ կը փչեն կը մարեն այն մոմերը, որք Բերայի մատրան մէջ զաւազան պլիսոյն վերև, ոտից ներքև կը վառէին: Եթէ անձնասպան իսկ է Քեաթիպեան, միթէ զթութեան արժանի չէ՞ այն դժբաղդ անձը «որ անեցաւ գնաց բարիք սերմանելով:» Գոյեցին մատրան դուռները ալ անոնց առաջ որք կուզէին վերջին անգամ մ'ալ տեսնել Քեաթիպեան:

Հոկտ. 29, ուրբաթ երեկոյ ժամը 2-ին անչուք մեռելակառք մը կանգ առաւ Բերա մեր եկեղեցւոյն առաջ: Կառքին մէջ դրին դագաղը, ծածկուած անդարդ հին ծածկոցով մը: «Խրատեցարուք ամենեքեան:»—Կարգացեր էինք նկարագրութիւններն այն ահագին բազմութեանց որք Եւրոպա կընկերանան ականաւոր անձանց դագաղին, բայց իրականութեան վրայ պօլսեցիք դաղափար չունէին, ուրբաթ օր այդ դագաղարը ունեցան: Ամեն կողմէ ամեն ազգի անձինք վազած են գունդագունդ Բերա: Եկեղեցական հանդէս չը կար, երկու քահանայք միայն, իբր բարեկամք, անպաշտօն կերպով յուղարկաւորաց մէջ կը գտնուէին: Խոր լռութիւնը կաւելցնէր ամենուն տխրութիւնը: Ամեն ոք կարծես կը մտածէր, եթէ իրաւցնէ Քեաթիպեան անձնասպան ըլլայ, նա որ կը կարծուէր Պոլսոյ ամենէն երջանիկ մարդը:—Կարծես բնութիւնն ալ ուզած էր համապատասխանել սրտերու սուգին: Թեթև ամպեր կը ծածկեն արեւը որ մօտ է մարը մտնել դեղին հորիզոնի վրայէն: Դեղին ամեն կողմ, աշնան մեռամաղձիկ դեղնութիւնը, դեղնած ծառերը, դեղնած տերևները, որք դեռինն են սփռուեր: Եւ աշնան այդ չոր դալկահար տերևները մեղմիկ հով մը կառնէ կը բերէ, կը սփռէ յուղարկաւորաց ու դագաղին վրայ:—Երբ մեռելակառքը կը հասնի Ֆեր-քեօյի ամայի գերեզմանատունը, ալ հովը պաղ կը փչէ. ամեն մարդ օձիքնին վեր կառնեն, կանայք պինդ կը փաթթոին իրենց չալերովը:—Մատաղատունկ ծառի մը ոստը փոսը փորուած է. ժողովուրդը չուզեր բաժնուիլ իր սիրելի բժշկէն և յետին նուագ կը բանան երեսը, կուտան յետին ողջոյնը:—Մի հայերէն, մի ֆրանսերէն դամբանական կը խօսուին: Բժշկութեան ուսանողք գերեզման կիջեցնեն Քեաթիպեանի մարմինը և վրան կը նետեն հողը: Հայ քահանայի աղօթքի մրմունջ չը կայ:—Ցեսած եմ, անձնասպաններու գերեզմանի վրայ հայ քահանային լալը և երեք ափ հող նետելն ու լսելը «չարչարեցար մարմնով, պատժուեցար հոգւով:» Արևը մարը մտաւ, հովը սաստկացաւ և ժողովուրդը լռութեամբ սփռեցաւ Պոլսոյ ամեն կողմը:

Ըսէք մեզ նախապաշարեալ, ըսէք մեզ տկար բնութիւն, բայց իրականութիւնը այս է, առանց քահանայի թաղում սարսուռ ազդեց ամենուն, թախիծ ամեն սրտերու:—Այլ եկեղեցին կը չահի, երբ ժողովուրդը ջերմ սիրով կը սիրէ զնա զոր եկեղեցին կը խոտէ, կը մերժէ:—Գուցէ ըսեն ոմանք նաև թէ Ը՞ր չարձկեցին երիտասարդները բողոք մը ընդդէմ եկեղեցականաց բացակայութեան:—Երիտասարդները լուռ կեցան, վասն զի երիտասարդութիւնը որ եւրոպական կրթութեամբ կրթուած է, միտքը սիրահար մեծ գաղափարներու, սիրող ճշմարտութեան, ոգեորուած ազնիւ զգացումներով, կը մտածէ Հայաստանի գիւղը գտնուած պարզ գիւղացիին վրայ, և չուզէր անոր համոզումներն վիրաւորել: Այն գիւղացին տկար է, զի տգէտ է, իսկ ուսեալ երիտասարդը զօրաւոր: Զօրաւորին պարտքն է ըլլալ նեցուկ տկարին:

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Վիէննայից հեռագրում են նոյեմբերի 1-ին: Բօսնիայի քաղաքական նահագապետ բարօն Նիկօլիչի Բոխարեստ գնալը ոչինչ քաղաքական նշանակութիւն չունի: Լրագրական տեղեկութիւնները այն բանի մասին, որ իբր թէ ազդեցութեան տէր ալբանցիները, Սկուտարիի աւստրիական հիւպատոսի միջնորդութեամբ դիմեցին աւստրիական կառավարութեանը խնդրելով, ուղարկել իրանց մօտ աւստրիական զօրքեր, անհիմն են, թէպէտ և ալբանցիների և չերնոգորցիների մէջ յարաբերութիւնները շատ լարված են:

—Ֆիլիպօպոլից հեռագրում են նոյեմբերի 1-ին: Ալէքօ-փաշան Կ. Պոլսից մի նամակ ստացաւ լորդ Դիւֆերինից, որի մէջ նա հաւանում է նրա ազնիւ վարմունքը սուլթանի հետ, և նոյնպէս հաւանում է նրա ընդդիմադրութիւնը համալաւօնական ձգտումների և խոստանում է նրան անգլիական կառավարութեան օգնութիւնը:

—Փարիզից հեռագրում են նոյեմբերի 2-ին: Համաձայնութիւն կայացաւ Ֆրանսիայի և Անգլիայի մէջ ֆինանսական վերահսկողութեան վերաբերութեամբ Եգիպտոսում. Ֆրանսիական ներկայացուցիչը կը նախադահէ պարտքային յանձնաժողովում:

—«Times» լրագրում տպված է Արաբի-փաշայի նամակը, որի մէջ նա գրում է, թէ պատերազմը վճռվեցաւ մինիստրների խորհրդի որոշմամբ, որ կայացել է խէդիվի նախագահութեամբ և Դէրվիշ-փաշայի ներկայութեամբ: Խէդիվի ազատամտութիւնից յետոյ ամբողջ ժողովուրդը կամենում էր ապստամբվել, որովհետև խէդիվը եղծեց Ղօրանի օրէնքները:

—Մադրիդից հեռագրում են նոյեմբերի 2-ին: Պապը յանձն է առնում սպանիական թագաւորի նորածին աղջկայ կնքաւոր պարտաւորութիւնները:

—Տունիսից հեռագրում են նոյեմբերի 2-ին: Տրիպոլիսից վերադարձած ապստամբութեան առաջնորդներին ֆրանսիական մինիստրը ներկայացրեց բեյին: Բեյը ասեց նրանց. «Եթէ Ֆրանսիան ձեզ ներեց, ես ևս ներում եմ ձեզ:»

—«Neue freie Presse» լրագրին Կատարոից հաղորդում են, որ շաբաթ օր Նիկշիչում կայացաւ ապստամբութեան առաջնորդների ժողովը, որոնք վճռեցին հարցնել չերնոգորիական իշխանից, թէ դիպլոմատիական ինչ քայլեր է արել նա և ինչպիսի վճիռներ են կայացրած օրից օր աճող աղքատութեան և սովի առաջն առնելու համար, եթէ նրանք սարսված կը լինեն ձմեռը Չերնոգորիայում անցկացնել:

—«France» լրագրին Բերլինից հեռագրում են, նոյեմբերի 11-ից: Իշխան Բիսմարկ այժմ մանաւանդ անհրաժեշտ է համարում սոցիալական վերանորոգութիւններ մտցնել: Նա մտադիր է հրաժարական տալ, եթէ ռեյխստագը կը չարունակի իր ընդդիմադրութիւնը: Տարածված լուրերի հակառակ, կանցլերը չուտով Բերլին կը վերադառնայ:

—Լօնդօնից հեռագրում են նոյեմբերի 2-ին: Համայնքների ժողովում Անսլէյ, պատասխանելով Դաունէին ասեց. «կառավարութիւնը ոչինչ տեղեկութիւններ չունի այն բանի մասին, որ բօէրները զրաւել են Շանտոիվաս: Գլադստոն, կառարելով Նորդկոտին տուած խոստմունքը, ասեց, որ սեպտեմբերի 14-ին Կայիրէ զրաւելուց յետոյ, կառավարութիւնը աշխատում էր շուտով դուրս բերել զօրքերը Եգիպտոսից, ի բաց առնելով նրանց, որոնք պարտաւոր են դեռ ևս Էմի փոքր ժամանակ մնալ այնտեղ կարգը պահպանելու համար. մնացած զօրքերը 12,000 հոգուց աւելի չեն: Կառավարութիւնը դիտաւորութիւն չունի երկար ժամանակով թողնել այնտեղ զօրքերը:

—Նոյեմբերի 8-ից Մադրիդից ստացված տեղեկութիւնների համեմատ, Հարաւային Սպանիայում սով է: Խէրէսում կողոպտվեցան հացթուխների խանութները: Հացթուխների գործակատարներից սված ամբոխը փողոցի վրա խլում էր հացով լի կողովները: Մէկ ուրիշ տեղ կողոպտված են հացի պահեստներ, իսկ վաճառատողոցում յափշտակեցին ուտելեղէնների բոլոր պաշարը: Պոլիցիան ստիպված էր գործին միջամտել: Այդ հանգամանքները աչքի առաջ ունենալով, թոյլ է տուած Մարսելից շատ ալիւր տանել Հարաւային Սպանիա:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 նոյեմբերի: „Прав. Вѣст.“ լրագիրը հաղորդում է, Ժաբինսկի-Պինսկի երկաթուղին հոկտեմբերի 15-ին կարող էր համարվել միայն կառուցվող և ոչ թէ վերջացած: Ճանապարհորդների և ապրանքների գնացքների շարժողութեան սկսելը կատարված է պատերազմական մինիստրի պատասխանատուութեամբ: Պատրաստ չեն երեք փոքր կամուրջներ, հաւասարակշռած են միայն առաջին և վերջին անցքերը: Ճանապարհային շինութիւնները շուտ են կառուցված: Կայարանների շինութիւնները վերջացրած չեն, պահպանների խցերը կառուցվում են, ջրի հասցնելը վերջացրած չէ, տեղը շինութիւնների համար շատ յարմար է: Ծախսերը, բացի շարժական իրերից և ռելսերից իւրաքանչիւր վերստին նստում են 18,400 ռուբլ: Ֆինանսների մինիստրը պաշտօնապէս յայտնում է, որ քաղաքային բանկերի մուտքերի տոմսակներին չէ յատկացրած կառավարական ապահովութիւն: Նրանց ընդունելը իբրև գրաւականներ պետական հիմնարկութիւնների համար պարտաւորեցուցիչ չէ: Այս հաղորդութեան պատճառը Վասիլեվսկի քաղաքային բանկի հաղորդութիւնն է, իբր թէ նրա տոմսակները նաղդ փողի տեղ են ընդունվում իբրև երաշխաւորվածներ կառավարութենից:

ՍԿՕՊԻՆ, 10 նոյեմբերի: Բանկի հոգաբարձուները հրաւիրում են պարտատէրերին Բեսարանի դատարանը նոյեմբերի 28-ին կոնկուրս ընտրելու համար:

ՏԱՇԿԵՆՏ, 10 նոյեմբերի: Սենատոր Գիրս ասեց, որ քննութեան նպատակն է ծանօթանալ երկրի տնտեսական և ֆինանսական դրութեան հետ, պատրաստել հաստատ օրէնքներ և զանազան տեղերի համար ժամանակաւոր կանոնադրութիւններ: Այդ բանին համակրում է գեներալ Չերնեաեվ:

ՓԱՐԻԶ, 10 նոյեմբերի: Երէկ երեկոյեան հասան այստեղ Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչ և նրա Ամուսինը: Շուտով կուղևորվեն Ռուսաստան: Գրեվիի առողջութիւնը լաւանում է: Շատ գաւառների մէջ գետերը դուրս են գալիս ափերից: Սենայի մակերևոյթը բարձրանում է: Փարիզին հեղեղ է սպառնում:

ՎԻԷՆՆԱ, 10 նոյեմբերի: Երէկ աւստրիական դեսպանը ռուսաց կառավարութեան մօտ կոմս Վօլկենշտէյն ուղևորվեցաւ Ս. Պետերբուրգ Բերլինի վրայով:

ՍՕՖԻԱ, 10 նոյեմբերի: Ազատամիտ կուսակցութիւնը վճռեց չը մասնակցել ազգային ժողովի անդամների ընտրութիւններին:

ԲԵՐԼԻՆ, 10 նոյեմբերի: Կոլօֆուրտի մօտ Պրուսիայի մէջ կործանվեցաւ երկաթուղու գնացքը: Մի քանի մարդիկ սպանված են:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 նոյեմբերի: „Прав. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է. 1883 թ. յունվարի 1-ից ծխախոտի վաճառման վկայականներ տալու համար առաջին կարգի մէջ անց են կացրած հետևեալ տեղերը. երկու մայրաքաղաքները, Վարշավա, Պրագա, Օդէսսա և Ռիգա, երկրորդ կարգի բոլոր նահանգական քաղաքները և Նովոչերկասկ, Սեմիպալատինսկ, Եկատերինոդար և Վլադիկավկաս, նաւահանգիստներ ունեցող քաղաքներից՝ Բերդիանսկ, Կերչ, Կրոնշտատ, Լիբավա, Նիկոլայեվ, Ռոստով (Դոնի վրա), Տագանրոգ, Էյսկ, գաւառական քաղաքներից՝ Ակկերման, Բերդիչեվ, Բոբրույսկ, Բոլխով, Բրեստ-Լիտովսկ, Վոլժսկ, Դինաբուրգ, Եկատերինբուրգ, Ելեց, Ելիսավետգրադ, Կոզլով, Կոլոմնա, Կրեմենչուգ, Լոդզ, Մօրշանսկ, Ռիբինսկ և Սիզրան, նոյնպէս Գրուշովսկոյ լեռնային աւանը, Դոնի զօրքերի շրջանները և հետևեալ պատգները՝ Սերգիեվսկի Մոսկվայի նահանգի մէջ և Վենեվա Լիբլինի մօտ: Երկրորդ կարգի մնացած բոլոր տեղերը: „Новое Время“ լրագիրը հաղորդում է, որ պլեսաւոր շաբաթի ակադեմիայի 50 ամեակի տօնին ներկայ կը գտնվի ակադեմիայի պատուաւոր անդամ ֆելդմարշալ Մոլտկէ: Բացի մեդալներից և գովասանական թերթերից ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը դիտաւորութիւն ունի նշանակել դրամական պրեմիաներ և ընծաներ ուսանողների ամենալաւ հեղինակութիւնների համար: „Биржевыя Вѣдомости“ լրագիրը հաղորդում է, որ աւստրիական կառավարութիւնը որոշել է երկաթուղի կառուցանել Զերնովիցից դէպի ռուսաց սահմանը Նովոսելիցի մօտ Բեսարաբիայի մէջ:

ՄՕՍԿՎԱ, 10 նոյեմբերի: Երէկ քաղաքային դուման մի մասնաժողով ընտրեց որ պէտք է մշակէ հարցը քաղաքային վարչութեան մէջ ծառայողների համար խնայողական դրամարկղ հիմնելու մասին:

ԲԵՐԼԻՆ, 10 նոյեմբերի: Այստեղի լրագիրները ողջունում են ռուսաց արտաքին գործերի մինիստր Գիրսին, ցանկութիւն յայտնելով Ռուսաստանի բարեկամութիւնը պահպանելու մասին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 նոյեմբերի: „Правит. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է, թէ կազանի ուսումնարանական շրջանի հոգաբարձուն յայտնում է ժողովրդական լուսաւորութեան մինիստրին, որ կազանի համալսարանի ուսանող Վօրոնցով, որ զրկված էր ստիպենդիայից քննութիւն չը տալու պատճառով, հոկտեմբերի 28-ին փորձեց գործով վիրաւորանք հասցնել բէկտորի պաշտօնակատար Ֆիրսովին լսարանի մէջ: Վօրոնցովին խանդարեցին միւս ուսանողները: Վօրոնցով արձակված է կազանի համալսարանից և զրկված է իրաւունքից երեք տարվայ ընթացքում ուսումնարանական մի այլ հիմնարկութիւն մտնելու: Այնուհետև Վօրոնցովի վարմունքը յանձնված է պրոկուրորի քննութեանը: Այդ անցքի պատճառով վճռված է մի մասնաժողով նշանակել համալսարանը քննելու համար զօրքերի պահպանութեամբ: Լուրերը մի քանի այլ համալսարանների փակման մասին անհիմն են:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 նոյեմբերի: „Правит. Вѣст.“ լրագիրը հաղորդում է, կազանի համալսարանի մէջ անկարգութիւններ սկսվեցան, որովհետև ստիպենդիայից զրկված և համալսարանի բէկտորին գործով վիրաւորելու փորձ անող ուսանողը արտաքսվեցաւ համալսարանից: Դասախօսութիւնները դադարեցրած են: Համալսարանը պահպանվում է զօրքերով: Միւս համալսարանների փակման մասին լուրերը ճիշդ չեն: Քաղաքային գանգատի պատճառով վճռված է առնել Լիտվինովից 329,307 ռ.: „Голосъ“ լրագիրը հաղորդում է. ի նկատի առնելով Մրօվինսկու ստացած ծանր վերքը Ղրիմի պատերազմի ժամանակ և նրա խանգարված առողջութիւնը, նրան թոյլ է տուած աքսոր գնալ կառքով իր սեփական հաշուով միւս կալանաւորներից առանձին և պահապանների ուղևորութեամբ: „Новое Время“ լրագիրը հաղորդում է, որ օբեր-պոլիցմէյստեր Գրեսսեր ներկայացրեց գաղտնի պոլիցիայի վերակազմութեան նախագիծը: Գաղտնի պոլիցիայի մէջ ծառայութիւն ստանալու համար պէտք է առանձին քննութիւն տալ: Ամենափոքր ռոճիկը 1500 ռուբլ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

սիստեմատիքական ընթացք

Գրիգորի Վարձելեան

Հայոց միջնակարգ ուսումնարանների համար

Մասն առաջին (ամբողջ Թուեր)

Մամուլի տակից լոյս տեսաւ նոյն խնդիրների երկրորդ մասը (կոտորակ Թուեր և երրորդական կանոններ)։

Գինն է 40 կոպ.

Ուսումնարաններին զիջումն 20%։

Ծախվում է Վ. Շահվերդեանի լրագրական գործակալութեան խանութում։

Օտար տեղերից դիմում են այս հասցէով Тифлисъ, въ Агентство В. Шавердова:

Վ. ՇԱՎԵՐԴԵԱՆԻ ԼՐԱԳԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ.

(Գօլովինսկի պրոսպեկտ, Ալեքսանդրեան պարտէզի մօտ).

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՎՈՒՄ ԵՆ ԹԷ տեղական, ԹԷ Ռուսաստանի և ԹԷ արտասահմանեան բոլոր պարբերական հրատարակութիւններին 1883 տարուայ համար։

6—10

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱԹՐՕՆ

ԷԺԱՆԱՅՐԱԾ ԳՆԵՐՈՎ,

Կիրակի, նոյեմբերի 14-ին, Հայերէն ներկայացումն

I.

Առաջին անգամ

ԱՂՔԱՏՈՒԹԻՒՆԸ ԱՐԱՏ ՉԷ

կոմեդիա 3 արարուածով

II.

ԵՐԵՔ ԱՊՏԱԿ

Վոդեվիլ 1 արարուածով։

1—2

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ ՁԻԱՆԵՐ *աշխատող, լծվող, պիանի ֆուրգոնների համար և այլն։ Հասցէն. „Եւրոպա“ հիւրանոց № 22*

1—5 (1)

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ *յայտնում է, որ ներկայ նոյեմբերի 12-ին իր ներկայութեամբ լինելու է աճուրդ կապալով տալու համար քաղաքային կՇԵՌՆԵՐԻ և ՁԱՓԵՐԻ հարկը։ Պայմանները կարելի է տեսնել ամեն օր վարչութեան գրասենեակի մէջ առաւօտեան 10 ժամից մինչև 2 ժամը կէս օրից յետոյ։*

3—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ *սրանով յայտնում է, որ ներկայ նոյեմբերի 14-ին կիրակի առաւօտեան 10 ժամին* ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՕՆՈՒՄ *լինելու են* ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՁԱՑՆԱՒՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ 188 3—1886 *թ. չորս ամեակի համար։*

2—3

Տրվում է ՎԱՐՁՈՎ *մի լոյս* ՍԵՆՆԱԿ *մեբելով, վառելափայտով, սամովարով և ծառայով, ամսական 12 ռուբլով։ Կուկիայում, Իսարլօվսկայա փողոց, տուն № 9, ներքին յարկում։*

ОТДАЕТСЯ одна свѣтлая КОМНАТА съ мебелью, отопленіемъ, самоваромъ и прислугою за 12 р. въ мѣсяцъ. Куки, Исарловская улица, домъ № 9, нижній этажъ.

1—10

ՐԱՖՖԻ

ՈՍԿԷ ԱՔԱՂԱՂ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Եւ վաճառվում է Թիֆլիսում կենտրոնական Գրավաճառանոցում և Հրատարակչի մոտ.

Գինն է գեղեցիկ կազմած 1 ռ. 35 կ. անկազմ 1 ռ։ —

Հրատարակչի հասցէն՝

Тифлисъ. Оаннесъ С. Степанянцъ на фабрикѣ Сали-оглы.

2—5

Թէև „ՈՍԿԷ ԱՔԱՂԱՂԻ հրատարակութիւնը պիտի լինէր պ. Ա. Ապրեսեանցի միջոցաւ, միայն մի քանի իրերից անկախ պատճառներով պարոնը այդ հրատարակութիւնը յանձնեց մեզ, գարձեալ կրկնակի իտալական հաշուապահութեան բաժանորդներից իւրաքանչիւրին իրան պատկանեալ մի գրքոյկը յանձնելով. ցանկացողները կարող են այսուհետև դիմել մեզ.

ՅՈՎՀ. Ս. ՍՏԵՓԱՆԵԱՆՑ.

1—2

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

„ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ“

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐՈՒԱՑ

Դասագիրքը

„Կովկասեան գրախանութի“ հրատարակութեամբ և ծախվում է նոյն գրախանութում։

Գինը 25 կոպէկ է։

Գումարով առնող և ԿԱՆԽԻԿ *վճարողին 20% զիջումն կը լինի։*

կարելի է դիմել.

ТИФЛИСЪ. Кавказская книжная торговля—З. П. Грикурову.

կամ

ТИФЛИСЪ. на Авлабарѣ. Ованесу Назарянцъ.

Ց. Նազարեանց.

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ *իր ուսումն աւարտած* ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ **ՍՏԷՓԱՆՈՎԱ**

կենում է Նագօրնայա փողոցում, Ամիրովի տանը։

4—5

Սորվեցնում եմ **ԿՐԿՆԱԿԻ ԻՏԱԼԱԿԱՆ ՀԱՇԻՍՊԱՀՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ և ՌՈՒՍԱՑ** *լեզուներով. պայմանների մասին կարող են դիմել ինձ մօտ* **ԶՈՒԲԱԼՕՎԻ** *քարվանսարայ, Գասպարեանցի մագազինում ամեն ժամանակ։*

ՍՄԲԱՏ ԳԻՏԱՏԱՐԵԱՆՑ

ԹԷՅ *առաջին հունձի այս տարի չափազանց գոյնաւոր և հոտաւէտ։ Այդ ԹԷՅԻՑ* **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** *մէջ սարքված է 50,000 ֆունտ և ծախվում է 25% էժան և աւելի լաւ քան ԹԷ ուրիշ տեղ։ Օրինակ. Լաւ ԿՕՆԳՕ ԹԷՅ 1 ռ.—1 ռ. 20 կոպ., պատուական ՍԱՆՖԱ ԹԷՅ 1 ռ. 40 կ., հիանալի ՄՕՆԻԿ ԹԷՅ 1 ռ. 60 կ. այս ԹԷՅ ամեն տեղ ծախվում է 2 ռ.—2 ռ. 50 կ., գեղեցիկ ԿԱՑՍԱՈՒ ԹԷՅ 1 ռ. 80 կ. և ամենալաւ ֆու-չու-ֆու ԹԷՅ 2 ռ. մաքուր ԹԷՅ առանց թղթի։ Նոյն տեղը սովորաբար լինում են 500 երկաթէ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 6 ռ.—60 ռ., երկաթէ ԳՐԻՉՆԵՐ ամբողջ Անդրկովկասի համար, շօկոլադ ֆրայ, շեվիլդի ԴԱՆԱԿՆԵՐ, վերականգնող ՄԱԿՄԱՍՏԵՐ մաղերի համար, հրացաններ ԴԱՈՒ, ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ վերի, ԹԱՄԲԵՐ բարձրերի, կօլմանի նշշշաայ, ԱԼԲՕՄՆԵՐ շվարցի կէս գնով։* **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ, ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԷՅՈՒՄ** № 156, 157, 158, 159 *և* 100։

76—100

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ, ԹԷՅԻ ԳՆԵՐԻ ՆՇԱՆԱՒՈՐ ՓՈՔՐԱՑՈՒՄՆ

(MAISON DE CONFIANCE) ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԷԱ № № 156, 157, 158, 159 *և* 160.

Համեմատեցէք ԹԷՅ

1 ռ.	10 կ.	*ԹԷՅի հետ ամեն տեղ* 1 ռ.	30 կ.
1 „	20 „	. . . . . 1 „	60 „
1 „	40 „	. . . . . 1 „	90 „
1 „	60 „	. . . . . 2 „	20 „
1 „	80 „	. . . . . 2 „	50 „
ամենալաւը 2 ռ.		. . . . . 3 „	——

Մի և նոյն տեղը գործակալութիւն վաճառման շօկոլադի և կակաո-ֆրայ էսսենցիայի, Պալմերի բիսկվիտների, Բազրի կօնֆեկտների, Շեֆիլդի դանակների, Տուրնեբի գրիչների, Դաուի հրացանների, Վեկլիի ըէվոլվերների, Բարնսբիի թամբերի, Մեկինի ամաններ, կօլմանի կրախմալ և մանանեխ, Շվարցի ալբօմներ և այլն և այլն։

26—100

Միջի փողոց, կաթոլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

Աւելի էժան, քան ԹԷ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ *ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ* ԿՐԱՎԱԹՆԵՐ 8—30 *ռ., չամադաններ* 250—25 *ռ., սակվոյաժներ* 1. 30—12 *ռ., սուն գուկներ ճանապարհի* 6—35 *ռ., մարաններ* (погребцы) 6—25 *ռ., սամովարներ* 60 *կ.*—1.25 *ֆունտը., կուլսօնի պղնձէ ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ուտիվալնիկներ մրամորնի* 38 *ռ.*—75 *ռ., հրացանները երկու լուլանի* 6—32 *ռ., ռէվոլվէրներ ամենայն տեսակ* 3. 50—30 *ռ., պատրոնները. (գուլաններ) ըէվոլվերի, սիգար Ռէնգարդի ֆաբրիկից. պապիրոս և թամբաքու կուշնարովի գիլզի պապիրոզի.* 5,000 ՖՈՒՆՏ ԹԷՅ (չայ) ԵՎ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, *բիսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) էլինէմի. կօֆէ էլինէմի և Միխէլսօնի. Պետերբուրգում* 40—1 *ռ.* 25 *կ. հայելիներ ամենայն տեսակ* 28 *կ.*—240 *ռ., պրոբկայ գինէվաճառների, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) դուլթուկ (пухъ), պաղնոսներ սամովարի և չայու, դանակ չանգալ գանազան ֆաբրիկների* 1 *ռ.* 20 *կ.*—25 *ռ. դուժինը. գրչակոթներ* 1 *ռ.* 80 *կ.*—5—60 *կ. դանակ ջիբի* 1—60 *կ.*—12 *ռ., դանակ հացի* 20 *կ.*—1 *ռ., հատը, կուխոնների* 1—40 *մինչև* 3—20 *կ. պրիբոր. միս կարելու մաշինայ. Անգլիական ուլթոներ, Բրիտանսկի չայնիկներ, կաֆէինիկներ ամենայն տեսակ, Ջաղացներ կաֆէի համար, ֆիլտեր—Ջուր մաքրելու, կրախմալ կարօքկէն* 18 *կ., վաքս ֆրանսիայի ծակոյ, թուղթ փոշտի, կանվերտներ, սուրգուչ, մատիտ, գրիչ երկաթէ, գրչակոթ, քարետախտակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիներ, գդալներ սեղանի և չայու ֆրաժէ, վարշավի և բրիտանսկի դուժինը* 1—50 *կ. մինչև* 12 *ռ., և չայու* 45 *կ.*—5 *ռ., չուտիչկէք* 45 *կ.*—5 *ռ., շամադաններ ամեն տեսակ* 25 *կ.*—12 *ռ. Ջուխտ, պոլսապոշկաններ վարշավու,* ՌԵԶԻՆԻ ԿԱԼՕՇՆԵՐ, *ամեն տեսակ, գուլբաններ կանանց և մարդկերանց* 15 *կ.*—50 *կ. Ջուխտ, շապիկներ, մարդկերանց գալուստիկներ, գոտիներ* 35 *կ.*—4—50 *կ., հատ, անձրևի և շոքի. սանդրեր շիրմայու ոսկրէ, գուտապերչովի և փայտէ, շչոտկաներ գլխի, շորի, սապոնի, պոլի և կարտի համար. չուլքի թէլ* (бумага) *մատոկի կօճի և շալէ* (гарусъ) *ֆեչատկէք մարդկերանց և կանանց, պորտմաններ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մներ գղանտերեյնի ապրանքներ, սապոն ամեն տեսակ* 3 *կ.*,—30 *կ., կտոր, հոտավէտ ջրեր, պուդրա, Գլիցերին ջրի քացախ, հոտավէտ պարաշոկներ* ԿԻԼԵՐԻ ԼԱԲՕՐԱՏՈՐԻՑ. *և այլն և այլն և այլն։*

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՔԱՅԵԼ ՏԷՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆՑԻ *պահեստում.* (въ складѣ) *միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում* № 13.

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հեռաւեալ հասցէով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

171—180

Միջի փողոց, կաթոլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

Միջի փողոց, կաթոլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍԻ ՄԷԿԻՑ

ՍԿՍԵՑ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ՎԻԵՆՆԱՅՈՒՄ

L'ORIENTAL

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԹԵՐԹԸ, ԱՄԻՍԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ։

„Ժուրնալ դ'Օրիան“ լրագրի հին բաժանորդներին դադարեցրած Թերթի տեղ կուղարկվի այդ նոր հրատարակութիւնը։

„L'Oriental“ *Թերթի տարեկան գինը* 8 *ռուբլ է, կէս տարվանը* 4 *ռուբլ։*

Գրվել կարելի է „ՄՇԱԿԻ“ խմբագրութեան մէջ, կամ ուղղակի Վիէննայում դիմելով հեռաւեալ հասարակ հասցէով. Vienne (Autriche) M. F. Salles I. Neuer Markt 9.

Дозволено цензурою, Тифлисъ, 11 Ноября 1882 года.

Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час., Лор-Меликов. ул. каз. д.